ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«01» 11 2023թ.
No 00926/94

«ԲԱՇԿԻՐՍԿԱՅԱ ՍՈԴՈՎԱՅԱ ԿՈՄՊԱՆԻԱ» ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԷԴՈՒԱՐԴ ՄԱԼԻՔԻ ԴԱՎԻԴՈՎԻՆ
(էլ. փոստի հասցե՝ Bakieva.NV@ruschem.ru,
հասցե՝ ք. Երևան, Սեբաստիա փող., շենք 18ա, բն. 8)

Հարգելի՛ պարոն Դավիդով,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի հոկտեմբերի 31-ի ««Բաշկիրսկայա Սոդովայա Կոմպանիա» բաժնետիրական ընկերության վարչական բողոքը մերժելու մասին» թիվ 465-Ա որոշման պատճենը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողովին փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ **Համակարգ**) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «10» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ **ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատարող՝ Թերեզա Հակոբյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (252)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 10 նոյեմբերի 2023 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2023 թվականի թիվ 465-Ա

«ԲԱՇԿԻՐՍԿԱՅԱ ՍՈԴՈՎԱՅԱ ԿՈՄՊԱՆԻԱ» ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի հոկտեմբերի 31-ի նիստում, քննարկելով «Բաշկիրսկայա Սոդովայա Կոմպանիա» բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) վարչական բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի համառոտ նախապատմությունը.

Ընկերությունը 2023 թվականի ապրիլի 14-ին Հանձնաժողով է ներկայացրել հաղորդում (այսուհետ նաև՝ **Հաղորդում**)՝ ի թիվս այլնի հայտնելով, որ Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառքում առկա է «Էկոսոլթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Էկոսոլթ» ընկերություն**) կողմից պատրաստվող սննդի սոդա, որի փաթեթավորման վրա առկա նշումները նույնական են Ընկերության անվամբ և միջազգային ընթացակարգով գրանցված թիվ 1242730 «Сода пищевая» ապրանքային նշանին:

Հանձնաժողովը 2023 թվականի մայիսի 12-ին ընդունել է ««Էկոսոլթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը մերժելու մասին» թիվ 206-Ա որոշումը (այսուհետ նաև՝ **թիվ 206-Ա որոշում**):

Ընկերությունը 2023 թվականի սեպտեմբերի 13-ին Հանձնաժողով է ներկայացրել վարչական բողոք (այսուհետ նաև՝ **Բողոք**)՝ խնդրելով տնտեսական մրցակցության բնագավառում օրենսդրության խախտման փաստով պայմանավորված «Էկոսոլթ» ընկերության նկատմամբ հարուցել վարույթ:

2. Ընկերության դիրքորոշումը.

Ընկերությունը Բողոքով հայտնել է, որ հանդիսանում է թիվ 1242730 «Сода пищевая» միջազգային ապրանքային նշանի (այսուհետ նաև՝ **Ապրանքային նշան**) իրավատերը: Ապրանքային նշանը 2015 թվականի փետրվարի 10-ից մինչև 2025 թվականի փետրվարի 10-ն ընկած ժամանակահատվածի համար գրանցվել է Հայաստանի Հանրապետության տարածքում 05 դասի ապրանքների շարքում:

Ընկերությունը նշել է, որ մարքեթինգային հետազոտությունների ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերվել են «Էկոսոլթ» ընկերության կողմից Ապրանքային նշանի ապօրինի օգտագործմամբ արտադրանքի նմուշներ:

Ըստ Ընկերության՝ միջազգային ընթացակարգով գրանցված և Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանության ենթակա Ապրանքային նշանը ձեռք է բերել տարբերակիչ հատկություն՝ հետևյալ պատճառներով.

1) «Сода пищевая» (Սննդի սոդա) անվանումն օգտագործվել է մի քանի տասնյակ տարիների ընթացքում,

2) բաց մամուլում տվյալ անվանման օգտագործմամբ ապրանքների մասին հրապարակված է տեղեկատվություն,

3) արտադրանքը ցուցադրվել է Ռուսաստանի Դաշնության և այլ երկրների ցուցացահանդեսներում,

4) արտադրանքն ունի արտահանման լայն աշխարհագրություն:

Ընկերությունը նշել է, որ իր կողմից արտադրվող «Сода пищевая» (Սննդի սոդա) անվանումով սննդի սոդայի (այսուհետ նաև՝ **Ապրանք 1**) սպիտակ-նարնջագույն գունային համակցությամբ փաթեթավորումն առանց չափազանցության կարելի է անվանել Ընկերության այցեքարտը: Ապրանք 1-ի փաթեթավորման գունավոր գրաֆիկական լուծումը՝ տուփի ամբողջ ուղղանկյան եզրագծի երկայնքով տեղակայված կարմիր, նարնջագույն և դեղին գծերը, այն տարբերակիչ տարրն է, որն ավելի է կենտրոնացնում սպառողների ուշադրությունը:

Ընկերությունը հայտնել է, որ իր կողմից օգտագործվող Ապրանքային նշանը սպառողներին տասնամյակներ շարունակ հայտնի է սննդի սոդայի ուղղանկյուն կայուն փաթեթավորմամբ, կարմիր, նարնջագույն, դեղին գծերով և սպիտակ ֆոնի վրա սև տառերով կատարված «Սոդա. Նատրիումի բիկարբոնատ» բացատրական գրառմամբ՝ Ընկերության՝ որպես արտադրողի նշման հետ միասին:

Հաշվի առնելով ապրանքների միատեսակ լինելը՝ Ընկերությունը նշել է, որ սպառողների շրջանում Ապրանքային նշանի և Ապրանք 2-ի արտաքին տեսքով ներկայացված ապրանքային նշանի միջև շփոթության առաջացման հավանականությունը մեծ է:

Ընկերությունը հավելել է, որ Ապրանք 2-ի արտաքին տեսքով ներկայացված ապրանքային նշանի նմանությունը Ապրանքային նշանին հաստատվում է մասնագետի եզրակացությամբ:

Այսպես, համաձայն «Սիբիրյան արտոնագիր» արտոնագրային և իրավական կենտրոնի 2023 թվականի հուլիսի 17-ի եզրակացության (այսուհետ նաև՝ **Մասնագիտական եզրակացություն**)՝ ուսումնասիրությունը թույլ է տալիս բարձր աստիճանի նմանություն հաստատել Ապրանքային նշանի և Ապրանք 2-ի արտաքին տեսքով ներկայացված ապրանքային նշանի միջև (Բողոքին կից ներկայացվել է Մասնագիտական եզրակացության բնօրինակը):

Ընկերությունը մեջբերել է «Ապրանքային նշանների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը, ապա հիմնվելով վերոնշյալի վրա և առաջնորդվելով մտավոր սեփականության ոլորտում միջազգային իրավունքով, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով (այսուհետ նաև՝ **Օրենք**) և արդարադատության հիմնական սկզբունքներով՝ խնդրել է վերանայել Հանձնաժողովի թիվ 206-Ա որոշումը և, տնտեսական մրցակցության բնագավառում օրենսդրության խախտման փաստով պայմանավորված, «Էկոսոլթ» ընկերության նկատմամբ հարուցել վարույթ:

3. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.

Բողոքի շրջանակներում Մտավոր սեփականության գործակալության (ներկայումս՝ Մտավոր սեփականության գրասենյակ, այսուհետ նաև՝ **Գրասենյակ**) «www.aipo.am» կայքում տեղեկատվություն հավաքագրելիս Հանձնաժողովը պարզել է, որ 2016 թվականի հունիսի 8-ին «Գրանդ Քենդի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Գրանդ Քենդի» ընկերություն**) անվամբ գրանցվել և իրավական պահպանություն է ստացել «Сода пищевая» անվանումով, ուղղահայաց ձգվող կարմիր ուղղանկյունաձև գրաֆիկական տարրից կազմված ապրանքային նշան, որը պահպանվում է կարմիր, դեղին, մոխրագույն, նարնջագույն, սպիտակ և կապույտ գունային համակցությամբ:

4. Բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

1. Ընկերությունը հանդիսանում է Ապրանքային նշանի իրավատերը:

2. Ապրանքային նշանը կազմված է ուղղահայաց ձգվող ուղղանկյունաձև կարմիր գրաֆիկական տարրից, որն էլ իր հերթին պարունակում է նարնջագույն ու դեղին գույներով ուղղանկյունաձև օղակներ՝ կլորացված անկյուններով: Գրաֆիկական տարրի կենտրոնական մասը պարունակում է սպիտակ կլորացված ուղղանկյուն, որի վերին մասում առկա է ռուսերենով երկտող գրառում՝ մեծատառերով և սևով կատարված՝ «НАТРИЙ ДВУУГЛЕКИСЛЫЙ» (նշանակում է «նատրիումի բիկարբոնատ»): Կենտրոնական մասում առկա է սև գույնի շեղ տառատեսակով և ռուսերենով կատարված երկտող նշում՝ «Сода пищевая» («Սննդի սոդա»), որը տառադարձվում է որպես «Soda Pischevaya/Սոդա Պիշեվայա», և որի բոլոր տառերն ունեն նույն՝ ծավալ հաղորդող սպիտակ եզրագիծը: Ապրանքային նշանի ստորին հատվածը եզրափակվում է «ГОСТ 2156-76» նշումով:

Ստորև ներկայացված է Ապրանքային նշանի պատկերը.

3. Հաղորդմամբ ներկայացված Ապրանք 1-ի փաթեթավորման արտաքին տեսքով ներկայացված ապրանքային նշանը (այսուհետ նաև՝ **Ապրանք 1-ի ապրանքային նշան**) կազմված է ուղղահայաց ձգվող ուղղանկյունաձև կարմիր գրաֆիկական տարրից, որն էլ իր հերթին պարունակում է նարնջագույն ու դեղին գույներով ուղղանկյունաձև օղակներ՝ կլորացված անկյուններով: Գրաֆիկական տարրի կենտրոնական մասը պարունակում է սպիտակ կլորացված ուղղանկյուն, որի գրեթե կենտրոնական հատվածում (մի փոքր վերև) առկա է սև գույնի շեղ տառատեսակով և ռուսերենով կատարված երկտող նշում՝ «Сода пищевая» («Սննդի սոդա»), որը տառադարձվում է որպես «Soda Pischevaya/Սոդա Պիշեվայա», և որի բոլոր տառերն ունեն նույն՝ ծավալ հաղորդող սպիտակ եզրագիծը: Փաթեթավորման ներքևում առկա է սև գույնով կատարված «ГОСТ 32802-2014» նշումը և ապրանքն արտադրողի վերաբերյալ այլ նշումներ՝ հետևյալ հերթականությամբ. «ЛАУРЕАТ ЛУЧШИХ 2020 СТО РОССИИ ТОВАРОВ», «ЗОЛОТОЙ ЗНАК, ЗНАК, КАЧЕСТВА XXI ВЕКА», «ПРОДУКТ БАШКОРТОСТАНА», «ЛУЧШИЕ ТОВАРЫ БАШКОРТОСТАНА 2020 ЛАУРЕАТ»:

Ապրանք 1-ի փաթեթավորման կողային հատվածներից մեկում առկա են նշումներ՝ սննդի սոդայի, կիրառելիության, քաշի (500գ), արտադրության ամսաթվի, պիտանիության ժամկետի, պահելու և պահպանման պայմանների, արտադրողի («Բաշկիրսկայա սոդովայա կոմպանիա» ԲԸ, 453110, Ռուսաստան, Բաշկորտոստանի Հանրապետություն, ք. Ստերլիտամակ, Տեխնիչեսկայա փող., տուն 32) մասին տեղեկատվություն, ինչպես նաև հեռախոսահամար՝ +7(3473)297-396, 297-671 և ներմուծողի մասին տվյալներ (ԱՁ Հ. Խաչատրյան): Փաթեթավորման մյուս կողային հատվածում առկա են նույն նշումները՝ կատարված ռուսերենով, իսկ ստորին հատվածում նշված է, որ այն համապատասխանում է «ГОСТ Р ИСО 22000»-ի պահանջներին:

Փաթեթավորման կողային հատվածներն ունեն դեղին գունավորում:

4. Ապրանքային նշանը, ըստ էության, արտացոլված է Ընկերության Ապրանք 1-ի փաթեթավորման (Ապրանք 1-ի ապրանքային նշան) ներկա տեսքում:

5. «Էկոսոլթ» ընկերության կողմից պատրաստված, «Сода Пищевая» անվանումով սննդի սոդայի (այսուհետ նաև՝ **Ապրանք 2**) փաթեթավորման արտաքին տեսքով ներկայացված ապրանքային նշանը (այսուհետ նաև՝ **Ապրանք 2-ի ապրանքային նշան**) կազմված է ուղղահայաց ձգվող ուղղանկյունաձև կարմիր գրաֆիկական տարրից, որն էլ իր հերթին կազմված է սպիտակ և դեղին գույնի ուղղանկյունաձև գծերից: Փաթեթավորման կենտրոնական մասը պարունակում է սպիտակ կլորացված ուղղանկյուն, որի վրա առկա է սև գույնի շեղ տառատեսակով և ռուսերենով կատարված երկտող նշում՝ «Сода Пищевая» («Սննդի սոդա»), որը տառադարձվում է որպես «Soda Pischevaya/Սոդա Պիշեվայա»:

Ապրանք 2-ի փաթեթավորման կենտրոնական հատվածը կիսվում է դեղին գծանմուշով, որից վեր առկա է սև գույնով կատարված լատինատառ «PAPI» գրառումը: Գրառման վերին հատվածում առկա է ցորենի երկու հասկերով շրջապատված խոհարարի պատկեր: Փաթեթավորման կողային հատվածում առկա է Ապրանք 2-ի, դրա կիրառելիության, պահելու և պահպանման պայմանների, քաշի (500գ), արտադրման և փաթեթավորման ժամկետների ու պատրաստողի («ԷԿՈՍՈԼԹ» ՍՊԸ) վերաբերյալ տեղեկատվություն, իսկ փաթեթավորման կողային մյուս հատվածում առկա են նույն նշումները՝ ռուսերենով:

Փաթեթավորման կողային հատվածներն ունեն կարմիր գունավորում:

6. Համաձայն Մասնագիտական եզրակացության՝ Ապրանքային նշանի և Ապրանք 2-ի ապրանքային նշանի միջև առկա է բարձր աստիճանի նմանություն:

Մասնավորապես, Ապրանք 1-ի և Ապրանք 2-ի փաթեթավորումների վրա տարածականորեն գերիշխող տարրերը նման են, ուշադրությունը կենտրոնացնում են իրենց վրա. ուղղանկյունի վրա հիմնված սպիտակ պատկեր, որը գտնվում է կարմիր շրջանակում, սպիտակ պատկերի կենտրոնում՝ երկու գծով կատարված «СОДА пищевая» գրառում, որը պատկերված է սև տառերով, մի փոքր թեքությամբ և հեշտությամբ հիշվում է սպառողների կողմից: Ինչ վերաբերում է Ապրանք 2-ի փաթեթավորման վրա առկա խոհարարի կերպարին՝ շրջապատված երկու հասկերով և ներքևում լայն դեղին գծով ու «PAPI» գրառմամբ, ապա, մասնագետի կարծիքով, այն ի վիճակի չէ բավարար տարբերություններ առաջացնել:

5. Վարույթի փաստական հանգամանքների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.

Օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարչական վարույթն իրականացնում է Հանձնաժողովի գործունեության ընդհանուր կանոնների համաձայն՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն օրենքով:

Օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի համար սույն օրենքով առանձնահատկություններ սահմանված չլինելու դեպքում համապատասխան հարաբերությունների նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթները:

Օրենքի 62-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի վարչական ակտի դեմ բերված Բողոքի քննությունը իրականացվում է սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերին համապատասխան:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական բողոքը քննարկվում է բողոքարկված վարչական ակտի իրավաչափության տեսանկյունից, իսկ հայեցողական լիազորության իրականացման դեպքում՝ նաև նպատակահարմարության տեսանկյունից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմքերն են՝

ա) սույն օրենքի 63-64-րդ հոդվածներով սահմանված հիմքերը.

բ) վարչական վարույթը դրա իրավունքը չունեցող պաշտոնատար անձի կողմից իրականացված լինելը, նաև այն դեպքում, եթե դա իրականացրել է կոլեգիալ մարմինը, որի կազմում եղել է վարույթին մասնակցելու իրավունք չունեցող պաշտոնատար անձը.

գ) վարչական ակտը վարույթն իրականացրած պաշտոնատար անձի (անձինք) կողմից ստորագրված չլինելը կամ ստորագրելու իրավունք չունեցող անձի (անձինք) կողմից ստորագրված լինելը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում.

գ) շահերի բախման իրավիճակում:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ վարչական բողոքը քննարկվում է բողոքարկված վարչական ակտի իրավաչափության տեսանկյունից և վարչական ակտի փոփոխման կամ անվավեր ճանաչման համար հիմք են հանդիսանում, ի թիվս այլնի, օրենքի խախտումը, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառումը կամ սխալ մեկնաբանումը կամ այնպիսի կեղծ փաստաթղթեր կամ տեղեկություններ հիմք ընդունելը, որոնցից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում կամ եթե առկա է շահերի բախում:

Տվյալ դեպքում Հաղորդմամբ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

1) Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառքում առկա է «Էկոսոլթ» ընկերության կողմից պատրաստված սննդի սոդա (500գ), որի փաթեթավորումը՝ դրա վրա առկա նշումներով նույնական է Ընկերության Ապրանքային նշանին:

2) Ապրանքային նշանի պատճենման արդյունքում սպառողը հանգում է այն մտքին, որ տվյալ անհատականացման նշանով ապրանքը նախկինում իրեն հայտնի արտադրողի ապրանքն է հանդիսանում (Ընկերությունը տասնյակ տարիներ իր արտադրանքը մատակարարում է Հայաստանի Հանրապետությանը):

Հանձնաժողովը 2023 թվականի մայիսի 12-ին ընդունել է ««Էկոսոլթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը մերժելու մասին» թիվ 206-Ա որոշումը:

Ընկերությունը ներկայացված Բողոքով հայտնել է հետևյալը.

1. Միջազգային ընթացակարգով գրանցված և ՀՀ-ում իրավական պահպանության ենթակա Ապրանքային նշանը ձեռք է բերել տարբերակիչ հատկություն՝ հետևյալ պատճառներով.

ա) «Сода пищевая» (Սննդի սոդա) անվանումն օգտագործվել է մի քանի տասնյակ տարիների ընթացքում,

բ) բաց մամուլում տվյալ անվանման օգտագործմամբ ապրանքների մասին հրապարակված է տեղեկատվություն,

գ) արտադրանքը ցուցադրվել է Ռուսաստանի Դաշնության և այլ երկրների ցուցացահանդեսներում,

դ) արտադրանքն ունի արտահանման լայն աշխարհագրություն:

2. Ապրանք 1-ի սպիտակ-նարնջագույն գունային համակցությամբ փաթեթավորումը կարելի է անվանել Ընկերության այցեքարտը, իսկ Ապրանք 1-ի փաթեթավորման գունավոր գրաֆիկական լուծումը՝ տարբերակիչ տարր:

3. Ապրանքային նշանը սպառողներին տասնամյակներ շարունակ հայտնի է սննդի սոդայի ուղղանկյուն կայուն փաթեթավորմամբ, կարմիր, նարնջագույն, դեղին գծերով և սպիտակ ֆոնի վրա սև տառերով կատարված «Սոդա. Նատրիումի բիկարբոնատ» բացատրական գրառմամբ՝ Ընկերության՝ որպես արտադրողի նշման հետ միասին:

4. Համաձայն Մասնագիտական եզրակացության՝ Ապրանքային նշանի և Ապրանք 2-ի ապրանքային նշանի միջև առկա է բարձր աստիճանի նմանություն:

Մասնավորապես, Ապրանք 1-ի և Ապրանք 2-ի փաթեթավորումների վրա տարածականորեն գերիշխող տարրերը նման են, ուշադրությունը կենտրոնացնում են իրենց վրա (ուղղանկյունի վրա հիմնված սպիտակ պատկեր, որը գտնվում է կարմիր շրջանակում, սպիտակ պատկերի կենտրոնում՝ երկու գծով կատարված «СОДА пищевая» գրառումը, որը պատկերված է սև տառերով, մի փոքր թեքությամբ և հեշտությամբ հիշվում է սպառողների կողմից, իսկ Ապրանք 2-ի փաթեթավորման վրա առկա խոհարարի կերպարը՝ շրջապատված երկու հասկերով և ներքևում լայն դեղին գծով ու «PAPI» գրառմամբ, մասնագետի կարծիքով, ի վիճակի չէ բավարար տարբերություններ առաջացնել:

Ընկերությունը խնդրել է վերանայել Հանձնաժողովի թիվ 206-Ա որոշումը և, տնտեսական մրցակցության բնագավառում օրենսդրության խախտման փաստով պայմանավորված, «Էկոսոլթ» ընկերության նկատմամբ հարուցել վարույթ:

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցին. արդյո՞ք Ապրանք 2-ի ապրանքային նշանը նույնական կամ շփոթելու աստիճանի նման է Ապրանք 1-ի ապրանքային նշանին:

Սույն գործի փաստերի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ Ապրանք 1-ի և Ապրանք 2-ի ապրանքային նշանները միմյանց հետ չեն նույնանում և առկա են որոշակի տարբերություններ.

Ստորև ներկայացված են Ապրանք 1-ի և Ապրանք 2-ի ապրանքային նշանները.

Ապրանք 1-ի ապրանքային նշան

Ապրանք 2-ի ապրանքային նշան

1. Ապրանք 1-ի և Ապրանք 2-ի ապրանքային նշաններն առաջին հերթին միմյանցից տարբերվում են Ապրանք 2-ի կենտրոնական հատվածը կիսող դեղին գծանմուշի վերևում սև գույնով և լատինատառով կատարված «PAPI» գրառմամբ, ինչպես նաև գրառման վերին հատվածում առկա ցորենի երկու հասկերով շրջապատված խոհարարի պատկերով:

2. Ապրանք 1-ի պարագայում գերակշռող են դեղին, կարմիր և սպիտակ գույները, իսկ Ապրանք 2-ի պարագայում կարմիրը և սպիտակը:

3. Ապրանք 2-ի ապրանքային նշանում պարունակվող ուղղանկյունը ներքևի հատվածում ունի կոտրված և թեքված գծի կամ եռանկյան տեսք:

Վերը նշված երկու ապրանքային նշանները, այնուամենայնիվ, ունեն որոշակի նմանություններ, քանի որ կազմված են ուղղահայաց ձգվող ուղղանկյունաձև և կարմիրի երանգներով կազմված գրաֆիկական տարրերից, որոնց գունային համակցության մեջ առկա որոշ տարրեր ևս կրկնվում են, մասնավորապես՝ բացի կարմիրից, առկա են սպիտակ, դեղին և սև գույները:

Թե՛ Ապրանք 1-ի և թե՛ Ապրանք 2-ի ապրանքային նշանների վրա առկա է սպիտակ ուղղանկյան վրա սև գույնի շեղ տառատեսակով և ռուսերենով կատարված՝ «Сода пищевая» (Սննդի սոդա) բովանդակությամբ երկտող նշում: Այսինքն, թե՛ «Էկոսոլթ» ընկերության կողմից պատրաստվող, թե՛ Ընկերության կողմից արտադրվող ապրանքները տվյալ պարագայում միատեսակ են (արտադրվում կամ պատրաստվում/փաթեթավորվում է սննդի սոդա):

Հանձնաժողովը գտնում է, որ տասնյակ տարիներ հայաստանյան շուկայում լինելու արդյունքում մեծ է Ապրանք 1-ի ապրանքային նշանի առնչությամբ սպառողների շրջանում հստակ պատկերացում կամ ընկալում ձևավորված լինելու հավանականությունը, ուստի վերջիններս չեն կարող չնկատել Ապրանք 1-ի և Ապրանք 2-ի ապրանքային նշաններում և առհասարակ ապրանքների փաթեթավորումների վրա առկա այն տարբերությունները, որոնք հանդիսանում են տարբերակիչ նշանակության կամ առաջնային ընկալման տարրեր և իրենց վրա են կենտրոնացնում սպառողների ուշադրությունը:

Տվյալ պարագայում, հայաստանյան շուկայի սպառողները, տեսնելով Ապրանք 2-ի ապրանքային նշանում տարբերակիչ նշանակություն ունեցող և առաջնային ընկալման տարր հանդիսացող լատինատառ «PAPI» գրառումը՝ խոհարարի պատկերի հետ միասին, կարող են այն ասոցացնել հայերենում առկա «պապիկ» բառի հետ, որի արդյունքում վերջիններս չեն կարող միանշանակ ընկալում ունենալ, որ տվյալ գրառումն ունի այլ իմաստ և որ խոհարարի պատկերի հետ միասին կարող է արդեն իսկ ներառված լինել տարիներ շարունակ շուկայում առկա և միայն ռուսերենով նշումներ պարունակող Ապրանք 1-ի ապրանքային նշանում:

Հանձնաժողովը գտնում է, որ ապրանքային նշանների շփոթության աստիճանի նմանության հարցը չի կարող որոշվել միայն գունային համակցության և չպահպանվող տարրերի առկայությամբ պայմանավորված: Հետևաբար, անհրաժեշտ է հաշվի առնել առկա տարբերակիչ նշանակություն ունեցող այն տարրերը, որոնք թույլ են տալիս միևնույն կամ նման գունային համակցությամբ ապրանքային նշանները միմյանցից տարբերել կամ բացառել/նվազեցնել դրանց շփոթելու հավանականությունը:

Վերոնշյալի մասին է վկայում նաև այն փաստը, որ Գրասենյակի կողմից 2016 թվականի հունիսի 8-ին «Գրանդ Քենդի» ընկերության անվամբ գրանցվել և իրավական պահպանություն է ստացել «Сода пищевая» անվանումով և ուղղահայաց ձգվող կարմիր ուղղանկյունաձև գրաֆիկական տարրից կազմված ապրանքային նշան, որը պահպանվում է կարմիր, դեղին, մոխրագույն, նարնջագույն, սպիտակ և կապույտ գունային համակցությամբ: Այն ևս բաղկացած է նարնջագույն և դեղին ուղղանկյուններից, իսկ ուղղանկյունների ներսում առկա սպիտակ ֆոնը պարունակում է մի շարք պատկերներ և նշումներ՝ կատարված կապույտով և մոխրագույնով:

Ստորև ներկայացված է «Գրանդ Քենդի» ընկերության անվամբ գրանցված ապրանքային նշանի պատկերը.

Այսինքն, Գրասենյակը, գրանցելով վերոնշյալ ապրանքային նշանը, գտել է, որ այն նույնական կամ շփոթելու աստիճանի նման չէ Ընկերության անվամբ գրանցված Ապրանքային Նշանին, ինչպես նաև առկա են տարբերակիչ նշանակության տարրեր: Հետևաբար, միայն գունային համակցության և կառուցվածքային որոշակի տարրերի նմանությունը (ուղղահայաց ձգվող ուղղանկյունաձև կառուցվածք, որի մեջ ներառված են կարմիր, նարնջագույն և դեղին գույներից բաղկացած ուղղանկյուններ) բավարար չեն դիտարկվել՝ ապրանքային նշանի գրանցումը մերժելու համար:

Այսպիսով, տասնյակ տարիներ հայաստանյան շուկայում լինելու արդյունքում սպառողների շրջանում ձևավորված հստակ ընկալման հավանականությունը, ցորենի երկու հասկերով շրջապատված խոհարարի պատկերը՝ «PAPI» գրառման հետ միասին, Ապրանք 1-ի և Ապրանք 2-ի ապրանքային նշանների և ընդհանրապես փաթեթավորումների գունային համակցության, դասավորվածության և կառուցվածքային որոշակի տարբերությունները հաշվի առնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Ապրանք 2-ի ապրանքային նշանը նույնական կամ շփոթելու աստիճանի նման չէ Ընկերության կողմից արտադրվող Ապրանք 1-ի ապրանքային նշանին:

Վերոգրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը գտնում է, որ բացակայում է Ապրանք 2-ի ապրանքային նշանի՝ Ընկերության, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ սպառողների շրջանում շփոթության առաջացման վտանգը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Ապրանք 2-ի ապրանքային նշանն առերևույթ նույնական կամ շփոթելու աստիճանի նման չէ Ընկերության կողմից արտադրվող Ապրանք 1-ի ապրանքային նշանին:

Ուստի, ողջ վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ թիվ 206-Ա որոշումը իրավաչափ է, ուստի բացակայում են այն բեկանելու կամ փոփոխելու հիմքերը:

Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն որոշմամբ Հանձնաժողովի դիրքորոշումներն արտահայտված են բացառապես մրցակցային իրավունքի լույսի ներքո, ինչը չի սահմանափակում Ընկերության՝ իր իրավունքների (շահերի) պաշտպանության խնդրանքով պետական իրավասու այլ մարմիններին դիմելու հնարավորությունը:

6. Եզրափակիչ մաս.

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ և 76-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մերժել «Բաշկիրսկայա Սոդովայա Կոմպանիա» բաժնետիրական ընկերության 2023 թվականի սեպտեմբերի 13-ի բողոքը՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 12-ի թիվ 206-Ա որոշումը թողնելով անփոփոխ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Բաշկիրսկայա Սոդովայա Կոմպանիա» բաժնետիրական ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2023 թ. հոկտեմբերի 31
Երևան